

ունդութիւն է մնացել դեռ Քսենոֆոնի օրերից:

* * *

Հայ ժողովրդի բարոյական նկարագրի մասին խօսելիս Բողենշտէդտ անտես չէ անում մի քանի Եւրոպացի ճամբորդների տուած բացասական գնահատութիւնը: Բայց Բողենշտէդտ նկատում է նախ, որ հայերի բացասական յատկութիւնները ցեղային չեն, այլ ստացական, արդիւնք՝ չընկալածի եւ հայ պատմութեան: Հաքստհաուզէնի նման Բող. եւս խիստ որոշ տարբերութիւն է դնում, այդ տեսակէտից, քաղաքական-վարչական ու գիւղաբնակ-հողագործ հայերի միջեւ: Առաջինները ապրում են հայրենիքից հեռու, մեծ կենտրոններում եւ «միայն անունով են ճանաչում իրենց հայրենիքը», մինչ հայրենի հողին կառչած հայ գիւղացիները «մօր կաթի հետ միասին ծծել են նաեւ իրենց սէրը դէպի հայրենիքը ու լաւագոյն անցեալի ոգեշունչ աւանդութիւնները» («Կովկասի ժողով.», 156):

Առաջինների՝ դադութարնակ հայ առեւտրականների վերաբերմամբ Բ. միանգամայն տեղին է համարում զերման հռչակաւոր հրապարակագիր Բեօրնէի մի այլ աւթիւ ասած այն խօսքը թէ՝ «նրանք այլ բան չեն վատաւում, քան միայն դրամ եւ... արհամարհանք»:

Ընդհակառակը, շարունակում է Բ., հայ գիւղացիները դեռ պահպանել են իրենց հայրերից ժառանգած շատ առաքինութիւններ: «Արարատեան աշխարհն այցելողը տեսնում է մի բոլորովին այլ ժողովուրդ, քան այն ճամբորդը, որ հայերի մասին դադափար է կադմում՝ Թիֆլիսում, Կ. Պոլսում, Մոսկուայում եւ առեւտրական ուրիշ դադութներում: Մենք ինքներս, թէեւ Հայաստանում կարճ ժամանակ մնացինք, փոխեցինք մեր սկզբնական նախապաշարումը այս ժողովուրդի նկարագրի մասին. մի դադափար, որ կադմուել էր մեր մէջ ոյժով՝ առաջուան փորձառութիւնների ազդեցութեան տակ»:

Բողենշտէդտ յայտնում է այն կարծիքը, թէ հայը գերազանցօրէն բանականութեամբ մարդ է, թէ՛ զգացումը նրա հոգեկան աշխարհում ստորադաս դեր է կատարում: Եւ այդ տեսակէտը հաստատող ապացոյցը համարում է նա ոչ այլ ինչ, քան՝ մեր մատենագրութիւնը:

Վերջինս հարուստ է գտնում նա պատմական, բանասիրական, իմաստասիրական, կրօնական եւ այլ կարգի ինքնուրոյն եւ թարգմանական յիշատակարաններով, մինչ նրանում բացակայում է բանաստեղծութիւնը:

Այս երեւոյթը Բ. տարօրինակ է համարում մանաւանդ, ինչպէս յիշուեց վերը, Հայաստանի աշխարհագրական դիրքը նկատի ունենալով, ինչպէս նաեւ իր դրացիութիւնը Պարսկաստանին, «որտեղ բանաստեղծութիւնը ըսկզբից իսկ գերիշխող է եղել եւ Կովկասից էլ դուրս, շատ հեռու, արձագանդ եւ հետեւողներ է գտել: «Պարսկական մուսայի սիրազեղ, արրեցուցիչ հնչիւնները միայն Հայաստանում մնացել են անարձագանք» («Կովկ. ժող.», 157):

Բողենշտէդտ իր այս կարծիքը հայ ստեղծագործութեան մասին պէտք է որ, դռնէ մասամբ, փոխած լինէր իր կեանքի վերջին տարիներում: Արդէն իսկ ինքն է, որ Հայաստան ճամբորդելուց չորս տասնեակներ անց՝ իր «Յուշեր»ի մէջ արձանագրում է այն փաստը, որ հայ մտաւորականութիւնը, հետեւելով Արտիկանի օրինակին, կարողացել է շատ կարճ ժամանակուան ընթացքում ստեղծել զեղարուեստական երկերով հարուստ մի նոր, աշխարհարար դրականութիւն: Եւ որ պակաս կարեւոր չէ՝ Բ. ինքն է արձանագրում, իր սկզբնական աշխատութիւնների մէջ, այն փաստը, թէ հայ ժողովրդական բանաստեղծութիւնը հարուստ է, առաջ բերելով մի շարք նմուշներ: Յետոյ՝ Բ. ին անծանօթ չեն եղած նաեւ հայ ժողովրդական աշուղները: Թերեւս այն պարագան, որ նրանք մեծ մասով ոչ-հայերէն, այլ թաթարերէն լեզուով են երգուելիս եղել, առիթ է տուել Բ. ին այն կարծիքը կադմելու, թէ նրանց երգերը հայ ժողովրդի ստեղծագործութիւնները չեն:

Զարմանալի է առհասարակ այդ տեսակէտից, որ ո՛չ Հաքստհաուզէն, ո՛չ էլ, մանաւանդ, Բողենշտէդտ, որոնք արեւելեան երաժշտութեան եւ բանաստեղծութեան հիացողներ են եղած, յիշատակութիւն իսկ չեն անում մեծանուն Սայաթ-Նովայի մասին: Դեռ մինչեւ հիմա էլ Թիֆլիսում կենդանի է 18-րդ դարու բանաստեղծ-աշուղի երգն ու խօսքը, առաւել եւս, ուրեմն, ա՛յն ժամանակները: Բ. ին